«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵ

Հասցեատեր՝

«Կողբ ՄԱ» ՀԿ

Էլեկտրոնային փոստի հասցե՝ koghbunited@gmail.com

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության

Կարգապահական և էթիկայի կոմիտեի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24.10.2024թ.

Նախագահ	Կարեն Հովհաննիսյան
Անդամներ	Հենրիկ Խաչատրյան
	Արփի Լազարյան
	Դավիթ Բակլաչյան

Վարույթ՝	16C2-012
Խախտում՝	1. Խաղի ժամանակահատվածում դաշտի տեր ակումբի անվտանգության աշխատակիցների ոչ պատշաճ, թերի աշխատանք կատարելը (Հավելված 1 Ե, 31-րդ կետ) 2. «Կողբ-Յունայթեդ -09» թիմի ֆուտբոլիստ Անդրանիկ Պողոսյանի (45655) կողմից մրցակցի նկատմամբ բռնարարքը (Հավելված 1 Զ, 15-րդ կետ) 3. «Կողբ-Յունայթեդ -09» թիմի ֆուտբոլիստ Սերյոժա Բեջանյանի (42644) կողմից մրցակցի նկատմամբ բռնարարքը (Հավելված 1 Զ, 15-րդ կետ)
Առաջնություն՝	ՀՀ ֆուտբոլի 2024-2025թթ. մինչև 16տ. Պատանեկան առաջնություն
Խաղ՝	«Կողբ-Յունայթեդ-09» - «ԽՄՕՄՄ-09», 08.10.2024թ.

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեն որոշեց՝

1. «Կողբ ՄԱ» ՀԿ.-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նախազգուշացում»:
2. «Կողբ-Յունայթեդ -09» թիմի ֆուտբոլիստ Անդրանիկ Պողոսյանին (45655) որակազրկել 2 (երկու) խաղով: Որակազրկումը տարածվում է 2024 թվականի հոկտեմբերի 8-ից սկսած և ներառում է արդեն իսկ բաց թողնված խաղ(եր)ը (այդպիսիք լինելու դեպքում): «Կողբ ՄԱ» ՀԿ.-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հնգապատիկի՝ 5000 ՀՀ դրամի չափով:
3. «Կողբ-Յունայթեդ -09» թիմի ֆուտբոլիստ Սերյոժա Բեջանյանին (42644) որակազրկել 2 (երկու) խաղով: Որակազրկումը տարածվում է 2024 թվականի հոկտեմբերի 8-ից սկսած

և ներառում է արդեն իսկ բաց թողնված խաղ(եր)ը (այդպիսիք լինելու դեպքում)։ «Կողբ ՄԱ» ՀԿ.-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հնգապատիկի՝ 5000 ՀՀ դրամի չափով։

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի նախագահ՝

Կարեն Հովհաննիսյան

<u>Ծանուցում</u>

- ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկման համար որոշմամբ պատասխանատվության միջոցի ենթարկված ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման վերաբերյալ գրավոր հայտարարություն ներկայացնի Կարգապահական գրասենյակ (disciplinary@ffa.am էլեկտրոնային հասցեով)՝ ի գիտություն Բողոքարկման կոմիտեին, համապատասխան որոշման մասին ծանուցվելուց հետո 3 (երեք) օրվա ընթացքում։
- Որոշմամբ հիմքերի տրամադրման համար համապատասխան Ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման հայտարարություն ներկայացնելու հետ միասին ներկայացնի որոշման հիմքերը պատվիրելու համար նախատեսված 50,000 ՀՀ դրամի չափով տուրքի վճարումը հավաստող ապացույց։ Նշված վճարը վերադարձման ենթակա չէ։
- Բողոքարկման հայտարարությունը ներկայացնելուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում (այն դեպքում, երբ Ֆուտբոլային սուբյեկտը դիմել է որոշման հիմքերը ստանալու խնդրանքով՝ բողոքարկման 5-օրյա ժամկետը սկսում է հաշվարկվել այդ հիմքերը ստանալու պահից) Ֆուտբոլային սուբյեկտը նույն կարգով պետք է ներկայացնի հիմնավորված բողոքը, ինչպես նաև բողոքի ներկայացման համար նախատեսված համապատասխան տուրքը վճարելու վերաբերյալ ապացույցը։ Բողոքարկման վճարը կազմում է 100,000 ՀՀ դրամ և ենթակա է վերադարձման յուրաքանչյուր դեպքում ԲԿ որոշմամբ սահմանված չափով՝ ըստ բավարարված պահանջների համամասնության։
- Նշված ժամկետներում բողոքարկման գրավոր հայտարարություն չներկայացնելը հանգեցնում է որոշման վերջնական և պարտադիր դառնալուն, և համարվում է, որ կողմը հրաժարվել է բողոք ներկայացնելու իր իրավունքից։